ընդունել պիտոյ է ազգն հայոց, ունիլ զօրագլուխս, ճարտարապետս, երկրաչափս, թօփխանի գլխաւորս 'ի ազգէն վրաց, եթէ չգտանի 'ի ազգէն ռուսաց, եթէ չգտանի 'ի ազգէն նէմցայից, այսինքն ալմանէ երիս ամաւ ժամանակաւ, նամակաւ Տանուտերաց հայոց, երդմնեցութեամբ, որպէս Օրէն է հայոց։

Օրինակ նամակի քաղաքապետութեան։

ԳԼՈՒԽ ՇԺԱ.

Տեսանելով մեր ընդունելութիւնն ժողովրդեան 'ի աշխարհէն փայտակարանոյ, և թուղթ փոխանորդութեան նոցա ընդ քեզ վրթանայ գեստաշէնեցւոյդ և երդմնելով քոյ առաջի ատենի տանուտերաց հայոց՝ հաստատեցաք 'ի սիրտս մեր հաւատարիմ դու 'ի վերայ տանն հայոց, վասն որոյ տուաք քեզ նամակ պաշտօնի իշխանական Քաղաքապետութեան, զի դու պատուելի վրթանէսդ իշխեսցես 'ի վերայ մայրաքաղաքին յերեւանու 'ի արարատեան աշխարհ ժամանակաւ երիս ամաւ, տուաք իշխանութիւն քեզ ընտրել 'ի միջէ աշխարհէն արարատեան այրս Օրէնագէտս երիս և տալ նոցայ պաշտօն խորհրդակցութեան քեզ երիս ամ ժամանակաւ, զի ընդ քեւ նստցեն աթոռ կառավարութեան, և տուաք իշխանութիւն քեզ զի տացես իշխանութիւն գաւառապետու-